

# ՏԱՐՕՐԻՆԱԿ ԽԱՂ

ՀԱՊՀ ԳՄ ծրագրավորողների թիմի անդամները հորինել են մի խաղը, որի եռթյունը հետևյալն է.

- տրված է լուցկու հատիկների կույտ, որոնց քանակը  $n$  է;
- խաղացողները երկուսն են;
- խաղի սկզբում առաջին խաղացողը լուցկիների կույտից վերցնում է կամ 1, կամ 2, կամ 3, կամ 4, կամ 5 լուցկու հատիկներ;
- որից հետո նույն քայլը կատարում է երկրորդ խաղացողը;
- երկրորդ խաղացողի առաջին քայլից հետո, առաջին խաղացողը վերցնում է այնքան լուցկու հատիկ քանի լուցկու հատիկ, որ ունի երկրորդ խաղացողը;
- երկրորդ քայլում նույնը կատարում է երկրորդ խաղացողը;
- և այսպես շարունակ...;
- հաղթում է այն խաղացողը, որը չի կարողանում այլևս քայլ կատարել:

Ձեր խնդիրն է պարզել հաղթող մասնակցին, խաղի ճիշտ տարբերակներ ընտրելու դեպքում:

## Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված է  $n$  բնական թիվը, որը չի գերազանցում 1000-ը:

## Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել 1, եթե կհաղթի առաջին խաղացողը և 2 հակառակ դեպքում:

## Օրինակ.

N	stdin	stdout
1	4	1